

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարւանը 6 ռուբ.

Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ Ե Լ Է Փ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուած.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տ Ե Լ Է Փ Օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Բ Գ Ի Դ Գ Ի Ն Ի Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի հոգաբարձու թիւնը
պատիւ ունի յայտնել, որ ապրիլ ամսի 9-ին, նոր կիրակի օրը, վաղըր մայր-եկե-
ղեցում կատարվելու է դպրոցի բարերար

Յ Ո Վ Ս Է Փ Է Ֆ Է Ն Դ Ե Ա Ն Յ Ի Հ Ո Գ Ե Հ Ա Ն Դ Ի Ս Տ Ը

Եղիսարէ թ Մինասեան Տէր-Միքայէլեան, իր որդկերանցով,
սրտի խորին ցաւով յայտնելով իր ամուսին

Բ Ա Ղ Դ Ս Ս Ա Ր Տ Է Ր Մ Ի Ք Ա Յ Է Լ Ե Ա Ն Ի

մահը, որ տեղի ունեցաւ ապրիլի 6-ին, խնդրում է ազգականներին և ծանօթնե-
րին շնորհ բերել յուզարկաւորութեանը, որ տեղի կունենայ կիրակի օր, ապրիլի
9-ին, առաւօտեան 10 ժամին, սեփական տնից, Բոլշայա-Կրիվայա, № 3, դէպի
Ձգրաշէնի եկեղեցին, և այնտեղից խօսքով գերեզմանատունը:
Ամբիճքը կը կատարվի շաբաթ օր, ապրիլի 8-ին, երեկոյեան 8 ժամին:

ԲՈՎԱՆԴԱՌՈՒԹԻՒՆ

Առաջին հարուածը չինական անշարժութեան.
Անգլիական նոր թղթակիցներ. Հայոց հարցը և
Եւրոպական մամուլը. Հայոց հարցը և լորդ Կիմ-
բլէյնը.— ՆԵՐՏԻՍԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայունաց Բարե-
գործական ընկերութեան ժողովը. Միասնաբար ա-
րդիւնաբերութեան կարիքները. Ռուսաց դրամա-
տիկական ներկայացումները. Նամակ Պետերբուր-
գից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թուրքիայից. Նա-
մակ Աւստրիայից. Նամակ Պարսկաստանից. Ար-
աքքի լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՐՈՒՆ. ՀԱՆԱԳԻՐՆԵՐ.
ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
Գառնուկը.

ԱՌԱՋԻՆ ՀԱՐՈՒԱԾԸ ՁԻՆԱԿԱՆ ԱՆՇԱՐԺՈՒ-

ԹԵՒՆ

Երէկ հեռագիրը հաղորդեց, որ ապրիլի
5-ին, Եւրոպայի և Չինաստանի ներկայա-
ցուցիչները ստորագրեցին խաղաղու-
թեան պայմանագիրը, և երկար ամիսների
ընթացքում ահաբեկ կոտորած անելուց
յետոյ յայտարարեցին զինադադարը...
Այս պատերազմը մի լաւ խրատ էր
մեծամիտ և անմատչելի Չինաստանի հա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Գ Ա Ռ Ն Ո Ւ Կ Ը

(Չատկական գրոյց)

Հիւրը ոչխարի սպանդ վա-
րեցաւ. իբրեւ որով առաջին կտրի
անմուռնչ կայ այնպէս ոչ բա-
նայ գրեթէ իւր: Առ խոստարու-
թեան նորա դատաւան նորա
բարձաւ, և զազգատունն նորա
ն պատմեցէ— Ես այլի:

Մատգործը սկսեց դանակը սրել:
Փոքրիկ գառնուկը, գանգուր, սպիտակ բրդով,
կանաչոտ սև դնչով, միամիտ աչքերը ձգեց փայ-
լուն դանակի վրա և հարցրեց մատգործին.

- Այդ ինչ է:
- Դանակ է. քեզ պիտի մորթեն:
- Ինչու պիտի ինձ մորթեն:
- Պէտք է քեզ մորթնաւ, որ գատկին կարմրա-
նենը ուտենք: Գրիստոնեան պէտք է գատկին
գառ մորթէ:
- Ինձ մի մորթիր, խնդրում եմ. որ մորթես՝ կը
ցաւի, արիւնս կը վաղէ, կը մեռնեմ: Ես ոչ օրի չեմ
չեմ տուել. քեզ էլ ոչինչ չեմ արել, մեղք չունեմ:
Թող քնամ արեւի տակ վաղվցեմ, կանաչ խոտ ա-
րածեմ, դաշտերումը խաղամ: Ես դեռ փոքրիկ

մարդ—Սրանից մի տարի առաջ, ոչ երկնա-
յին կայսրութեան պետը, և ոչ էլ վերջին
չինացին իրանց մեղքին անգամ չէին անց-
կացնում, թէ աշխարհիս երեսին կարող է
գտնվել մի յանդուգն պետութիւն, մի խե-
լացնոր կառավարութիւն, որը համարձակ-
վէր մտածել անգամ, թէ կարող է մրցել
Չինաստանի հետ, կանգնել նրա անհատա-
նելի ոյժի առաջ, կամ ներս խուժել նրա
սահմանների մէջ...

Բայց այն, ինչ երէկ չինացուն թը-
վում էր աներեւակայելի, անկարելի և ան-
հասկանալի, արդէն իրողութիւն է, և դառն
իրողութիւն: Մի քանի ամսվայ մէջ փոք-
րիկ Եւրոպական այնպիսի ծանր հարուած-
ներ տուեց վիթխարի պետութեանը, որ
նրան սպառնում էր վերջնական անկում,
ստիպել կործանուում: Եւ նա ստիպվեց ըն-
դունել ամենածանր, ամենավիրաւորական
պայմաններ, որպէս զի Եւրոպական վայր
դնի իր զենքը...

Այդ պայմաններից մէկը, մեր կարծիքով,
վերին աստիճանի կարեւոր է և ուշադրու-
թեան արժանի.— Չինաստանը համաձայնու-
թիւն տուեց, որ սրանից յետոյ Եւրոպա-
ցիները մտնեն Չինաստան, հիմնեն բամբա-

նա, երեք շաբաթ հազու կայ օր ծնվել եմ. ու-
ղում եմ օր ու արև տեսնել, մեծանալ: Մեղք չէ
որ այսպէս մատաղ-մատաղ ինձ մորթնաւ:

— Մատաղ գառնաւ միւսն էլ համով կը լինի:
Դու ուղում ես ուտել և ապրել, ես էլ եմ ու-
ղում ուտել և ապրել. քեզ պիտի ուտեն օր ապ-
րեն: Դու էլ, չէ, կանաչ խոտը մորթում ես քո
ատամներով, ես էլ է ուղում արև տեսնել, մե-
ծանալ, ծաղկել, պտուղ տալ. բայց դու նրա գլու-
խը կտրում ես, կամ արմատից պոկում ես—որ
ուտես ու ապրես:

— Աստուծա սիրուն, մի մորթիր, արտասուքն
աչքերին, պաղաղեմով ասում էր գառնուկը: Թող
մեծանամ. ես քո երեսներին խաղալիք կը դառ-
նամ. փոքրիկ սիրուն գառնուկներ կը ծնեմ քեզ
համար: Բուռիս կը խուզես—չոր կանես, կաթն
կը կթնա—իւր ու պանիր կը շինես: Երբ ծերա-
նամ՝ էլի միւսն ու կաշին քեզ կը մնայ: Թող մե-
ծանամ, յետոյ...

— Ես ես խոսում, ասաց ձանձրացած մա-
գործը: Խաղալիք, բուռիք, կաթ՝ առանց քեզ էլ
կը գտնվի իսկ դու շատ համով խորտիկ կը լի-
նես:

— Բայց ինչ իրաւունքով...

— Ինչ իրաւունք, այ յիմար. իրաւունքը այս
դանակն է, տեսնար:

— Անգիւթ, անիւրաւ, անաստուած, անիծեալ—
աղաղակում էր գառնուկը, մինչ մատգործը նրան
պառկեցնում էր և ոտքը նրա փորին դնում...

կաղործութեան գործարաններ և զբաղվեց
ուրիշ արդիւնաբերութիւններով...

Կրանով Եւրոպական առաջին հարուածը
տուեց չինական պատին, որը բաժանում է
այդ երկիրը արտաքին աշխարհից, և մինչև
այժմ չէր թող տալիս օտարներին մուտ
գործել այդ երկիրը, և ձեռնարկել այս
կամ այն արդիւնաբերութեան:

Կարելից ի վեր արեւելքի այդ ամենա-
մեծ պետութիւնը ինքն իրան թաղել է
անշարժութեան գերեզմանի մէջ: Նա ոչ
օտարին էր ընդունում, և ոչ էլ օտարին
տալիս: Եւրոպական քաղաքակրթութիւնը
գոյութիւն չունի նրա համար. ժամանա-
կակից մուտքը և սօցիալական շարժում-
ները չէին կարողանում թափանցել այդ
երկիրը, ինչպէս չէ կարող թափանցել ա-
րեւելի ճառագայթը գերեզմանի մէջ: Նրա
անշարժութիւնը իրէն աշխարհէն էր:

Եւ ահա վերջին պատերազմը առաջին
հարուածը տուեց չինական անշարժու-
թեան: Եւրոպացին իրաւունք ստացաւ
մուտ գործել այդ երկիրը, և նա, որ սի-
րահար է ժամանակակից քաղաքակրթու-
թեան, իր հետ կը մտցնի այդ մեռած,
թմրած, անշարժութեան մէջ փթած եր-
կիրը նոր գաղափարներ, նոր մեքենաներ,
արդիւնաբերութեան նոր ձևեր, նոր հո-
սանք...

Եւ երբ այդ մուտքագլուխ և բարոյա-
պէս շղթայակապ երկիրը յարաբերութեան
մէջ կը մտնի դրսի աշխարհի հետ, երբ
նրա թմրած օրգանիզմի մէջ փոքր առ-
փոքր կը մտնի մուտքը վերածնութեան
կենդանարար հոսանքը, այն ժամանակ ան-
կասկած նա կը սկսի ապրել աւելի երջա-
նիկ, աւելի ապահով, և աւելի լաւ, քան
թէ այժմ, երբ ամբողջ Չինաստանը, ինչ-
պէս ցոյց տուեց վերջին պատերազմը, ոչ
այլ ինչ է, եթէ ոչ անտեսական և մտաւոր
մի այլանդակութիւն...

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆՈՐ ԹՂԹԱԿՆԵՐ

Բացի Լոնդոնի նշանաւոր լրագիրների
թղթակիցներից, որոնք այնպէս աշդու-
թեամբ մուտ գործեցին թիւրքաց Հայաս-

տան և հաղորդեցին այնպիսի կարեւոր վը-
կայութիւններ այնտեղի եղելութիւնների
մասին, այժմ թիւրքաց Հայաստանում գտն-
վում են և գաւառական երկու լրագիր-
ների թղթակիցներ, այն է՝ Գլազգօ քա-
ղաքի «Herald» և Պլիմուտ քաղաքի
«Western Morning News» լրագիրների թղթ-
թակիցները: Այդ թղթակիցների նամակ-
ները և հեռագիրները նշանակված են
փետրվարի 28-ից և մարտի 13-ից ու 16-ից
և գրված են թիւրքի վիլայէթի թէսէկնը
(Թագաքանդը) և խինձորով գիւղերից:

«Herald» լրագրի թղթակիցը իր հետա-
գոտութեան հիման վրա յայտնում է, որ
միջոց է, հայերի մէջ եղել են մի քանի յե-
ղափոխականներ, բայց դրանց գործունեու-
թիւնը դեռ իր սահմանային սկզբնական շըր-
ջանում է եղել և նա ժամանակ էր պա-
հանում զարգանալու համար: Մինչդեռ
ներկայ կոտորածը պատրաստված, վարորդ
ծրագրված է եղել թիւրքերի կողմից, ամեն
տեղ նշանակված էին պահապան զինուո-
րական վաշտեր, հրաւիրված էին քրդական
ցեղեր, կաղմակերպված խմբերով, և երբ
սկսվեց ընդհարումը, որի սկիզբը մի սովոր-
ական դէպք էր այստեղի հովանական կեան-
քում, յանկարծ փլուզվեց, և որ նշանա-
ւորն է պատրաստի զինուորները միջա-
մոտեցին գործին և մի այնպիսի խիստ, ա-
բիւնահեղ կոտորած առաջացրին, որի մաս-
նամանութիւնները սարսափ են բերում
մարդու վրա: Մի յեղափոխական Մուրադին,
որի իսկական անունն է Համբարձում Բո-
յաշեան, և նրա 30—40 ընկերներին բռնե-
լու համար միջոց կարելի է տան ու վրա
անել մի երկիր, ուր. 30—40,000 բնակիչ
կար և վրէժ առնել անմեղ, չինական գոր-
ծով պարապող ժողովրդից:

Այնուհետեւ թղթակիցը առաջ է բե-
րում թիւրքերի գաղաւթութիւնների այնպի-
սի փաստեր, որոնք մինչև այժմ դեռ չէին
հաղորդված լրագիրներում: Այդ դէպքերի
նկարագրութիւնը միայն մի բան է ապա-
ցուցանում, որ այն բարբարոսութիւնները,
որոնք կատարվել են, նոյն իսկ ամենազրգու-
ված ուղեղը չէ կարող երևակայել...

Յետոյ թղթակիցը մի մեծ և շատ հան-
գամանորէն գրված յօդուած է նուիրում

ընտները կրում և ամեն տեսակ բեզմաններ կա-
տարում: Մենք վսեմափայլ էֆենդիների և ա-
ղաների զուարճութեան համար էլ ենք գործած-
վում. մեր սիրուն աղջկաներն ու մանուկները լըը-
կում ենք օսմանեան փառահեղ հարէմխանաները:
Մենք իբրեւ նշաւակ կանգնում ենք կայսերական
զինուորի դիմաց, որպէս զի հրացանով մեր ճակա-
տին նշան առնէ և վարժվի հրացանաձգութեան
մէջ: Ասա հիմա, անիւրեղ գառնուկ, դու ես շատ
օգուտ տալիս քո տիրոջը, թէ մենք մի հզօր և
բարեխնամ կառավարութեան:

— Դուք, պատաւախանց գառնուկը:
— Խո՛ւմ այդպէս է: Լաւ: Մէկ օր բարեխնամ կա-
ռավարութիւնը—յաւիտեան փառաւորվի նրա ա-
նունը—ասաց իր մտքում.— Չեմ ուղում գեւաւոր-
ների տուած օգուտը. ուղում եմ նրանց մորթել,
ուղում եմ իմանալ, թէ ոնց են թպրում մար-
մինները զուրկներից բաժանվելիս, ոնց են չուում
գեւաւոր կանայք իրանց աչքերը, երբ լսումնե-
րին թիւրքա-թիւրքայ կորատնն նրանց առաջ: Գնա-
ցէք, մորթուեցէք—ասաց բարձրագատիւ փաշա-
ներին. բայց այնպէս արեք, որ լաւ թմաւայ լի-
նի: Բարեգութ կառավարութեան հրամանը կա-
տարվեց. մեղանից չորս-հինգ հազար հոգի կո-
րան: Փառք բարբարին, մեր ճակատի գիրն այս
էր: Հարիւրներով ծիւր մէջ խնդրեցին, ապրտու-
ցին. հարիւրներով կրակի մէջ կորովեցին—ձեն-
ձահոտը գիւղը բռնել էր. հարիւրներով գիւղա-
խօրով արին, հարիւրներով սուլին վրա շարեցին.

սպանիացի կեղծ ճանապարհորդ խմբի ստեղծվածները մերկայանալու և հերքելու համար: Դուրս է գալիս, որ խմբիցը շատ սահմանափակ շրջանում է ճանապարհորդել և փոքր-Ասիայից նա հեռացել է այն միջոցին, երբ դեռ նոր էր սկսված Սասունի կոտորածը և դրան աշխարհը ոչ մի տեղեկություն չուներ այն աղետների մասին, որ այդ զբաղվել լուսնային երկրում կատարվում էին:

Միև, այն է «Vestern Morning News» լրագրի թղթակիցը, որ լաւ ծանօթ է երկուստեք կերպի հանգամանքներին, այնտեղ ապրող ժողովուրդներին, մանրամասն պատմում է թիւրքերի նախապատրաստական գործունէութիւնը, որով դարձեալ ապացուցանում է, որ Սասունի կոտորածը թիւրքերի նախամտածած և ծրագրած ցանկութիւնն էր, նոյնպէս և այն կատաղի կոտորածը, սպանութիւնները և աւերումները, որոնք հողի հետ հաւասարեցրին Սասունի երկիրը: Այս թղթակցի տեղեկութիւնները լրացնում են այն սարսափիչ նկարագիրը, որ տուել էին նախորդ թղթակիցները: Մենք առաջ չենք բերում մանրամասնութիւնները, որովհետեւ դրանց մասին «Մշակի» ընթերցողները արդէն պարզ գաղափար են կազմել նախկին տեղեկութիւններից:

Մի նոր սեփական թղթակցութիւն է տրւել Բիթլիսի վիլայէթի խմբագրի զեւղիչ Լօնդոնի «Daily Jas» լրագիրը: Այդ թղթակցութիւնը գրված է շատ սառն և յաւակնութիւն ունի անկողնապահ քննութեան և հետազոտութեան պատկեր ներկայացնելու:

Նա աւելի զբաղված է նկարագրելով այն դէպքերը և անցքերը, որ տեղի են ունեցել Սասունի մէջ և նրա շրջակայ տեղերում կոտորածից առաջ 1892 և 1893 թուականներին: Թղթակցը պատմում է թէ ինչ յուզումներ էին տիրում Սասունում, թէ ինչպէս սասունցիները վճռել էին բողոքել ծանր տուրքերի դէմ, թէ ինչ ընդհարումներ ունեցան նրանք քրիւղերի հետ 1893 թուին:

Գալով ներկայ կոտորածի գործերին, նա աշխատում է համոզել, որ տեղական քրիւղերը իրանց լծով չեն տուել անգլիականներ, գաղանային, բարբարոս սպանութիւններ, որ այդ վայրերում լինելը իրանց լծով են տուել միայն համիրիէյի հնձեղացիներ պատկանողները, որոնց ղեկավար և հրամանատար հանդիսանում էին թիւրքաց կանոնաւոր զօրքի պաշտօնեաները:

Ինչպէս երևում է, այս թղթակցութիւնը գրել է մի անձն, որ անձանթ չէ տեղական հանգամանքներին:

ՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ

I

Այն տեղեկութիւնները, որ տուեցին անգլիական «Daily Telegraph» և «Daily News» լրագիրների թղթակիցները, մեծ հետաքրքրութիւն առաջ բերեցին դէպի թիւրքաց հայերի վիճակը: Բաղմաթիւ լրագիրներ թէ Անգլիայում և թէ եւրոպական ուրիշ երկրներում արտասպան այդ թղթակցութիւնների համառօտութիւնը և սկսեցին միաբերան զբաղվել հայկական խնդրով:

Անգլիական «Weekly Times and Echo», «Evening News and Post», «Sun», «Lloyd Weekly Newspaper» լրագիրների վերջին համարները պարունակում են իրանց մէջ զանազան տեղեկութիւններ, նոյնը անում են ռուսարական «Pester Lloyd», գերմանական «Deutsches Blatt», «Norddeutsche Allgemeine Zeitung» լրագիրները:

Վերջին լրագիրը տեսութիւն անելով այն բոլորին, որ գրվում է Անգլիայում, չեղում է, որ անգլիական լրագիրների կասկածոտ և թիւրքափրական տօնը փոխվեց և նոր ուղղութիւն ընտացաւ:

II

Անգլիական «Vouth London Press» լրագիրը հաղորդում է, որ պրոֆէսոր Թուոյնսը կարողացել է մի դատախազութիւն հայերի մասին, որի մէջ յայտնել է հետեւեալը: Հայերը երբորդ դարից ընդունելով քրիստոնէութիւնը, անդադար կաւ են մղել իրանց կրօնի, իրանց համոզմունքների համար: Նրանք աշխատասէր մի ժողովուրդ են, լաւ հպատակներ, բայց անդադար հարստահարվել են: Իսկ վերջին ժամանակներս ենթակվել էին կրկնակի և կամայական տուրքերի, որոնց ծանրութիւնը անկարող եղան տանելու և բողոքեցին: Ունեցիկները յայտնեցին իրանց համակրութիւնը հայկական դատին:

III

Լօնդոնի «Daily Telegraph» լրագիրը իր մարտի 30-ի համարում գետնից է Մուշ քաղաքի պատկերը: Քաղաքը տափարակի վրա չէ, այլ մի փոքրիկ բարձրութեան լանջի վրա: Լաւ տներ քիչ կան, նրանք նման են այն տներին, որ կաշին կարտում և կաղզուանում այն ժամանակ, երբ թիւրքիկացի անցան Ռուսաստանի ձեռքը:

IV

Սկարբորո քաղաքում հրատարակվող «The Scarborough Weedy Post» լրագիրը, որ շատ էլ համակրող չէ հայոց հարցին, վերաբերվում է մեծ կասկածով այն տեղեկութիւններին, որ տալիս են «Daily Telegraph» և «Daily News»-ի թղթակցութիւնները, ասելով, թէ գտել է նրանց մէջ հակասական կէտեր. օրինակ, ուր մէկը հայտնում է հարկւրաւոր զօնք, միւսը դնում է հագարաւոր:

Լրագիրը յանդիմանում է թղթակիցներին, որ նրանք ուրիշների բերանից են խօսում, պատող լուրերի հիման վրա, հնգութեամբ է վերաբերվում այն բանին, որ «Daily News»-ի թղթակցը

Ձայնը ընդհատվեց կանացի ողբի ձայներով, որ գետնի տակից էին գալիս: «Ախ Արփիսիկ, Ախ իմ սիրուն Արտաշէկ, Գիթօ ջան Գիթօ»: Մի կնոջ ձայն էլ երգում էր:

«Փեսիկ կողքին պառկեցուցին, Կարմիր նարտը կապեցին: Բարով վայելես ալ նարտըդ, Մարիկըդ քաշէ քո կարտըդ, Անուշ Սիրանուշ»:

«Իսկ մեզ, շարունակեց ձայնը նուազելով— մենք այս երկու փոսում մեծ ու պղտիկ եօթը հարիւր հողի կը լինենք—մեզ աւելի իմաստուն կերպով այս աշխարհն ուղարկեցին—չը մեռած» հոբեցին, առանց հող թաղեցին: Իսկ դարմանում ես, դարմանալու էլ բան էր: Փոսի բերանը կանգնեցնում էին մի քանի մարդ, և սուրնով ետեւից երկուսերեք հարուած տալիս. մենք գլորվում էինք ցած, և թրքմի ընկնում ուրիշների վրա ու թրպտում. մէկ էլ ուրիշներ թրքմի ընկնում էին մեր վրա, սկսում էինք ներքեւ-վերեւ միմաւր թպրտալ: Ժամերով փոսը ճղնդոց և թառանջ էր լսվում. փոսի մէջը շարժվում, գալարվում էր, կարծես որդունքներ եռալիս լինէին: Ես էլ հոգեվաթիւն մէջ թպրտում էի. մէկ էլ թրքմի մի մարմին ընկաւ վրաս. թառանջից իմացայ, որ պառաւ մայրս էր, կռնակով երեսիս ընկաւ, շունչս կտրվեց: Մէկ էլ զգացի, որ մի տաք բան աչքես ու բերանս է հոսում. հակացայ որ մօրս արիւնն էր: Արիւնն ինձ խեղդեց—և ես այս աշխարհը փոխադրվեցայ»:

Իբր թէ գտել է մի աստուածավախ թիւրք, որ խօստովանել է ճշմարտութիւնը:

Լրագիրը ինքն էլ խօստովանում է, որ կոտորած և աւերումներ եղել են, բայց չէ հաւատում այն անգլիականներին, որ կատարվել են մանուկների և աղջիկների վերաբերմամբ:

Այո, Անգլիայում նստած ղեկաւոր է հաւատալ այդ անսովոր անգլիականներին,—բայց բաւական է միայն չնորս բերել այն թշուառ երկիրը, որ կոչվում է Հայաստան.—և այն ժամանակ այլ ևս ոչինչ բան աշխարհում «անհաւատալի» չի թվայ...

V

Թիւրքաւոր «New-York Herald» լրագիրը, որ առաջ անսանձ յարձակողական յօդուածներ էր գրում հայերի դէմ, այժմ լուել է: Նա մի կարծ յօդուածում ծաղրեց «Daily Telegraph» լրագրի թղթակցին, անուանելով նրան առիւծի կորիւն, արտասպան «Daily Graphic» լրագրի թղթակցի պատմած մի կտորը, չեղելով այն բանի վրա, որ պատմող հայը պարծեցել է, թէ ինքը վեց մահմտական է սպանել, և այդ կարճ քաղաւածներին յետոյ իսպառ լուցաւ:

Լաեց, որովհետեւ կատարեալ հրէշ պէտք է լինել այս բոլորից յետոյ թիւրքիային պաշտպան հանդիսանալու համար:

VI

Անգլիական Նշանաւոր «Times» լրագիրը հրատարակել է մի նոր թղթակցութիւն, որ պատմված են բաղմաթիւ քառմանի դէպքեր վերջին կոտորածի և առհասարակ թիւրքաց Հայաստանում կատարվող եղելութիւնների մասին: Այս թղթակցութիւնը իր լուրջ ոճով և քննական ոգով մեծ տպաւորութիւն է գործել անգլիական հասարակական կարծիքի վրա:

VII

Ինչ որ անկարելի էր անաչառ և անկողնապահ լրագիրների թղթակցիցների համար, հարաւոր և կարելի դարձաւ թիւրքաց կառավարութեան կողմից կաշառված միակ անգլիական լրագրի «Pall-Mall-Gazette»-ի խմբագրի համար, որը, ինչպէս «Մշակի» Պօլսի թղթակիցը հաղորդեց, այս օրերս եղել է Կ. Պօլսում:

Այժմ «Pall-Mall Gazette» լրագիրը հաղորդում է, որ իր խմբագիրը այս օրերս ընդունվեց սուլթանի մօտ ռանկըրութեան և մի երկար ու շատ հետաքրքիր խօսակցութիւնից յետոյ, որի բովանդակութիւնը, սակայն, լրագիրը չէ հաղորդում, սուլթանը առաջարկեց նրան գնալ՝ որպէս անկախ յատուկ թղթակից: Հայաստան, հայկական անկարգութիւնների տեղը:

VIII

«Ռուսաց գործակալութեանը» վիէննայից հեռագրում են. «Polit. Corresp» լրագրին Կ. Պօլսից հաղորդում են, որ վերջին ռանկըրութեան ժամանակ, որ տուեց սուլթանը բրիտանական դես-

—Գրեք չէիք բողոքում, հարցրեց դառնուկը զարմացած:

—Բողոքեցի ինչ է:

—Վա, չէիք դանդաղում, էլի:

—Որ ասում եմ անխելք ես: Բարեկամ կառավարութիւնը մեր տէրն է, տաճիկը մեր ազան է. ուղում է՝ կապրեցնել, ուղում է՝ կը մորթէ. էլ ինչ գանգաւ: Մենք միշտ շնորհակալ պէտք է լինենք նրա կամեցածից: Չէս լսել, որ էտէրէի սրբազան Մեսրոպ եպիսկոպոսը և հայ էֆէնդիները շնորհակալութեան ուղերձ մատուցելին վեհափառ սուլթանին: Մշու սուլթան սուրբ կարապետի միաբաններն էլ յայտնեցին Ֆեռիզադանից եկած էֆէնդիներին, թէ «Օսմանեան վեհափառ սուլթանի հայրագոթի հովանիին տակ հայ հաւատարիմ հպատակներս անդորր և երջանիկ կեանք կը վարենք և անդադար կաղթօքնեք նորին վեհափառութեան արեւատութեան համար»:

Գառնուկը ապշած լսում էր, առանց պատասխան տալու:

—Հիմա հասկացար, շարունակեց ձայնը, որ տիրոջ դէմ դանդաղումը՝ անխելութիւն և ստահակութիւն է, և դու զուր ես աղաղակ բարձրացնում: Հարկւր անգամ ինքը բեղ երանի էլ տուր, որ աղան բեղ պիտի մարթէ: Մի բոպէ միայն դանակը վիզդ պիտի քաշէ, ցաւ չես զգայ. կը տաքանայ ու պրծաւ: Յետոյ կաշիդ մաքուր կը մաշեն, փորտիքդ կը մաքեն, կարագ լուրջ վրադ կը քսեն, փուռը կը զրկեն կը կարմրացնեն,

պանին, խօսք բացվեց հայոց հարցի մասին, որի ժամանակ կատարեալ համաձայնութիւն երևաց դէպի այդ հարցը ապագայում վերաբերվելու մասին: Դեսպանին հաղորդեցին, որ Հայաստանի վերանորոգութիւնների ուսումնասիրութիւնը յանձնված է մի յատուկ յանձնաժողովին, Թուրքան փայայի նախագահութեամբ: Ընդհանուր կարծիքն է, որ կընդունվին այն վերանորոգութիւնների նախագիծերը, որ մշակել են հայոց գործերի համար կազմված քննիչ յանձնաժողովին մասնակցող երեք պետութիւնների ղեկավարները:

IX

Աւստրիական «Neue Freie Presse» լրագիրը հայոց անկարգութիւնների և թիւրքաց դաղանութիւնների առիթով տպագրել է մի հետաքրքրական յօդուած, որից քաղուածներն են առաջ բերում Պետերբուրգի ռուսաց լրագիրները: Փոխանակ այդ քաղուածները առաջ բերելու, մենք տպագրում ենք «Մշակի» այս համարում վիէննայի մեր թղթակցի նամակը, որի մէջ առաջ է բերված աւստրիական այդ աղբերակ լրագրի կարծիքը:

X

Ապրիլի 1-ին Լօնդոնում, ինչպէս հաղորդում է «Morning Advertiser» լրագիրը, կայացաւ մի ժողով Ստիվենսօնի նախագահութեամբ՝ կարծիք յայտնելու հայոց գործերի մասին:

Նախագահը մի տեսութիւն անելով հայերի վիճակի մասին յայտնեց, որ վերջին 16 տարում թիւրքական վարչութիւնը օրից օր վատթարացել է և դրա պատասխանատուութեան մեծ մասը ընկնում է Անգլիայի վրա, որ միշտ մի առանձին խնամքով պահպանում է եղել թիւրքիայի գոյութիւնը և նրա հնդկականութիւնը: Այժմ ժամանակ է վերջ դնելու այդ դրութեանը: Լօրդ Կիլմերէյը գտնում է, որ ներկայ բոպէն յարմար բոպէ է ըէֆօրմների խնդիրը աջակցելու համար:

Հայաքնակ գաւառներից պէտք է կաղմել մի մեծ նահանգ, որի նահանգապետը գործի եւրօպական հսկողութեան ներքոյ և որի ոստիկանութիւնը կազմված լինի եւրօպական միացեալ սպաներից: Ժամանակ է զիմելու ներդրածական միջոցները:

Ժողովը ողբորութեամբ ընդունեց այդ առաջարկները և օրոշեց ժողովի եղբակցութիւնը յայտնել կառավարութեան ի տնօրէնութիւն:

XI

«Daily News» լրագիրը հաղորդում է, որ անգլիական պարլամենտի նիստերում դանադան անձինք հարցրեց են տուել, թէ արդեք կառավարութիւնը հետամուտ է եղել իմանալու, թէ ինչ հրահանգներ են ստացած եղել այն թիւրք օֆիցերները, որոնք ուղարկված էին Սասուն և ինչ միջոցներ են ձեռք առել այնտեղ դաղանութիւնների առաջն առնելու: Այդ հարցին պատասխան տրվեց, թէ դեսպանները ամեն միջոցներ գործ են դնում պարզելու բոլոր այդ տեսակ խնդիրները:

այնպէս որ ասել չի լինի: Յետոյ մաքուր, սպիտակ, փառաւոր սեղանի վրա կը բազմեցնեն ափսէի մէջ, կանաչ խոտի փունջը բերանը, կարմիր ձուաններ, մատաղ կանաչին, անուշահամ ըմպելիքները շուրջը կը դարսեն: Յրեւելի աղաները, փափկասուն տիկիները շորս բոլորդ կը նստեն, աչքերով լեզու կը փաղաքեն, խեղբեր մտքերը քօվրադ կը լինի: Դու մի փոքրիկ բան՝ տաս հոգու զովասանքին կարծանանաւ, տաս փափուկ փորի մէջ կը հանգստանաւ: Մեղ պէս չես լինի, որ երկուսերեք հարկւր մեծ-մեծ մարդիկ մի փոսում իրար վրա ենք թափթափած, մի «Հօդօց» ասող էլ չունենք:

«Տեսար հիմա, որ դու արժանի էլ չես այդ մեծ պատին, որ դու միշտ երախտապարտ պիտի լինես աղալիդ, որ բարեհաճում է քեզ իր փառաւոր սեղանին դարդ չինես Մեղ յիշիդ, լեզու փաղք տուր»:

—Լաւ է ասում հայը, սակայն մտադործ և դառնուկին նորից պառկեցրեց:

—Ձէ, չէ, չէ, չեմ ուղում, որ ինձ մորթեն, ուղում եմ ապրել, ուղում եմ... անիծ... աղաղակում էր անհասկացող դառնուկը. բայց նրա բողբի բառաշինը խառնվեց կիօրորի խառնօցին և արիւնի վաշտը:

Այս աղմուկի ձայնից զարթեցայ.—փոքրիկ երեխան լալիս էր. ծիծ ուտելու ժամանակն եկել էր:

Ստ. Մալխասեանց

սրի կտորածը մի կողմ մնայ: Մանաւանդ մանուկներին նուրբ ճաշակով էին վերջացնում օսմանեան լուսավորող դիւնորները, և մի և նոյն ժամանակ հանդես հանում իրանց մատնիկ ճարտարութիւնը և զաւուկի կորովը: Փոքրիկ երեխաներին մի-մի ոտիկներից բռնած վեր էին նստում. երբ նրանք թաւալ-թաւալ ներքե էին գլորվում՝ օրին օդի մէջ սրով խփում երկու կտոր էին անում (սկէկ զընաց, երկուս եկաւ, անձրեն էլ աւելի)՝ ասում էին հանդիսատեսները). որին սուինը այնպէս վարպետութեամբ դիմ էր անում վանաշուք էֆէնդին, որ մանուկը վրան շամիրվում էր, և միւս էֆէնդիները «մաշալան» էին ասում՝ գուարճացած ու զարմացած: Մի գիւցաղնասիրտ սպայ էլ գրազ եկաւ իր բարձրագատիւ ընկերոջ հետ, որ մի հարուածով կարող է չորս լամուկի գլուխ թոցնել: Մի շիշ կոնեակի գրազ եկան: Դիւցաղնը խեց մայրերի գրկից չորս փոքրիկ երեխայ—խմստուրթեամբ էն մանրերն էր ջուկում, որ ոսկորները կակուղ լինեն—իրար վրա դարսեց մահուդի պէս, ամուր կապտեց, որ գլուխները իրար մօտ մնան. կապոցը մի գերանի վրա դրեց, և հակառակն ոյժօժով, բոլոր թափով սուրը որ իջնեցեց՝ չորս գլուխիկները անձայն մի կողմ գլորվեցան և չորս կարմիր աղբիւր սկսեց նստել վերելք: «Գրաղը տարայ», ասաց դիւցաղնը. «է վալան» պատասխանեցին բարձրագատիւ ընկերը և հանդիսատես էֆէնդիները: Մայրերից մէկը խնթի պէս ծիծաղում էր...

XII

Ամերիկական «Post» լրագրում կարգում ենք հետևյալը.

Հետզհետե լոյսը սկսվում է սփռվել Հայաստանի բրիտանական կոտորածի սարսափելի իրականությունները։ Առաջ կոտորածի և տանջանքների պատմությունը անցնում էր նեղ խողովակի միջով և առիթ էր տալիս կասկածելու նրանց ճշմարտության մասին, ի ներկայումս ունենալով, որ թիւրք կառավարութիւնը խիստ և բացարձակ կերպով ժխտում էր ամեն բան։ Սակայն այժմ ակնհայտ է վկայել զեկուցագրերը, որոնք ստուգված են քննիչ յանձնաժողովի կողմից, այլ ևս ոչ մի կասկած չեն թողնում սարսափելի իրականության մասին։

Գրանից հետևում է այն, որ անհրաժեշտ է շնչել Եւրոպայի հողից թիւրք տիրապետութիւնը։ «Անյաղթելի» թիւրքը այլ ևս տեղ չը պէտք է ունենայ քաղաքակրթության անուն կրող ազգերի շարքի մէջ։

XIII

«Times» լրագրի վիէնայի թղթակիցը հետադրում է մարտի 27-ից, թէ քննիչ յանձնաժողովի զեկուցագրերը հայերի կոտորածի մասին մի անշուք ամայն հաստատում է մինչև այժմ հրատարակված բոլոր տեղեկութիւնները։

XIV

Ապրիլի 4-ին համայնքների ժողովում պարլամենտի անդամ Շվանն հարցապնդում արեց սըր Էդուարդ Գրեյին, թէ արդեօք կառավարութիւնը պնդեց այն բանի վրա, որպէս զի Մուշի յաջորդ Ներսէս Խաթաբանեանը Մուշ ուղարկվի զեկուցատներին ցուցմունքներ տալու համար, որպէս հիմնադրադէպ իմացող Սասունի սպանութիւնների ծագումը և նպատակը։ Նոյն հարցապնդումն արվեց և դոկտոր Համբարձում Բոյաճեանի մասին, որ յայտնի է Մուշի անունով։

Սըր Էդուարդ Գրեյ պատասխանեց, որ բրիտանական զեկուցատն ուղարկած զեկուցագրից երևում է, որ վճռված է քննութեան կանչել Համբարձում Բոյաճեանին և շատ ուրիշ բանտարկեալներին Բիթլիսի բանտից։ Մուշի յաջորդ Ներսէսի անունը չէ յիշված, բայց զեկուցատնը կատարեալ իրաւունք ունեն հարցափորձի ենթարկել ում որ նրանք կը կամենան։ («Hob. Os.»).

ՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ ԵՒ ԼՈՐԻ ԿԻՄԲԵՐԼԵՑ

(«Daily News»)

II

Իր երկար և ընդարձակ ճառի մէջ լորդ Կիմբերլէյ հետեւեալ մտքերն արտայայտեց.

Ամենից առաջ անգլիական արտաքին գործերի մինիստրն ասեց, որ ջերմ կերպով համակրում է այդ տեսակ մի պատգամաւորութեան, բայց իր դիրքը թող չէ տալիս իրան մանրամասն բացատրելու այդ համակրութեան հիմքը, այդ դիրքը և իր պատասխանատու պաշտոնը ստիպում են նրան, բացի դրանից, կռուել իր խօսքերը և չափաւոր լինել իր լեզուի մէջ։

Այդ առաջարկից յետոյ, պատասխանելով ատենաբանների խօսած ճառերին և յարեցած հարցերին, նա գլխաւորապէս կանգ առաւ երեք կէտերի վրա, այն է 1) Բէֆօրմների անհրաժեշտութիւնը, 2) Ֆրանսիայի և Ռուսաստանի գործակցութիւնը և 3) գործադրելի միջոցները։

Առաջին կէտի վերաբերմամբ նա ասեց, որ կառավարութիւնը ամեն միջոցներ ձեռք է առել, որ Սասունի քննութիւնը կատարվի անկողնային և ոչ թիւրքական քննութիւն լինի, այն է՝ լիակատար և արդար. այդ նպատակին հասնելը կարելի է ապահովել համարել, քանի որ քննիչ յանձնաժողովին մասնակցում են թաղական կառավարութեան, ինչպէս և երկու բարեկամ եւրոպական մեծ պետութիւնների—Ռուսաստանի և Ֆրանսիայի պատուիրակները, որոնք առանձին առանձին և միմեանցից անկախ զեկուցագրեր կը ներկայացնեն։

Սակայն ներկայումս ամենքին զբաղեցնող հարցը միայն Սասունի մասնաւոր դէպքը չէ, այլ ինչպէս շատ իրաւացի նկատեց ճառախօսներից մինը, միտքը Ստիւքենսը, զեկուար նպատակը պէտք է լինի ապահովել հայերի կեանքը, ստացուածքը, կրօնը և պատիւը։ Խնդիրը միայն նրանում չէ, թէ պէտք է պատժել գաղանթիւնների հեղինակներին, այլ ինչպէս անել, որ այդ գաղանթիւնները այլ ևս չը կրկնվեն և առհասարակ մի

մշտական դարձան դանդի։ Միակ դարձանք ընդհանուր մտքներն է, բայց այդ հարցը չըջապատված է դժուար պարզաներով։

Թէև մեր դեպքերը, չարունակեց Կիմբերլէյ, սըր Ֆիլիպ Կէրրին հաւաստեցնում է մեզ, որ իր ընկերները, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանները կատարելապէս համոզված են Բէֆօրմների անհրաժեշտութեան մէջ և հարկը պահանջած ժամանակ, նրանք նոյնպիսի ջերմ և անկեղծ կերպով կօգնեն, ինչպէս օգնեցին Մուշի քննութեան գործում, բայց Բէֆօրմների իրագործման հարցում զլիւսաւոր դժուարութիւնը պէտք է նկատել այն, որ Հայաստան ասելով չը պէտք է հասկանալ մի երկիր, որ բնակված է բացարձակապէս հայերով։ Ոչ, նա ասիական թիւրքի մի մասն է, որ սովորաբար կոչվում է Հայաստան, որտեղ մեծ թիւով հայեր կան և շատ տեղերում խիտ կերպով բնակված են, սակայն այդտեղ կայ և մի մեծ մահմետական ազդեցականութիւն, որը մի քանի նահանգներում մեծամասնութիւն է կազմում։ Կան նոյնպէս և շատ հայկական համայնքներ, որով թիւրքաց կայսրութեան ասիական մասի զանազան տեղերում և թէև շատ էլ բազմաթիւ չեն, բայց նրանք նոյնպէս արժանի են համակրութեան և չը պէտք է անտես առնուին։

Երկրորդ կէտի վերաբերմամբ Կիմբերլէյ յայտնեց, թէ զլիւսաւոր նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ունենալ Ռուսաստանի և Ֆրանսիայի գործակցութիւնը և նրանց հետ համերաշխ գործել, քանի որ նրանք ևս անմիջական կերպով չան ունեն արեւելեան խնդրում. նոյնպէս ի նկատի պէտք է ունենալ Բելգիայի դաշնագիրը ստորագրող միւս պետութիւնների կարծիքը։ Ոչ մի կասկած չը կայ, որ այդ պետութիւններն ևս չեն խնայի իրանց գործակցութիւնը, երբ ժամանակը հասնի։ Գալով Ռուսաստանին և Ֆրանսիային, նրանք արդէն խոր կերպով համոզված են, որ վտանգաւոր է անիոփոխ թողնել երկրի այժմեան վիճակը և որ պէտք է մի աղբու դարձան դանդի չարքի դէմ։

Ինչ վերաբերում է հիւպատոսական զեկուցագրերի հրատարակելուն, այժմ այդ անյարմար է անել և պէտք է սպասել, մինչև քննութիւնը վերջանայ, որովհետև նրանց հրատարակութիւնը ներկայ պարագաներում կարող է վնասել գործին։ Գալով վերջին և ամենաէական հարցին, —միջոցների գործադրութեան—լորդ Կիմբերլէյ յայտնեց, որ պէտք է բոլորը համոզված լինեն և հաւատան, որ կառավարութիւնը ամենայն ուշադրութեամբ և լրջութեամբ կը քննի և կը լսի առաջարկելի միջոցները և երբ ժամանակը հասնի, նա անպատրաստ և ձեռնառնայն չի լինի։

Այժմ դեռ անհնարին է յատուկ և որոշ միջոցներ առաջարկել, մի բան միայն պարզ է, այդ է, որ սովորական հպատակների մեծ մասը դժգոհ են յուր կառավարութիւնից և մինչև այն աստիճան, որ ստիպվան են յեղափոխական մտքեր անուցանել։ Պէտք է ամեն կերպ աշխատել, որ այդ դժգոհութեան պատճառները վերացվեն, որ հայ ժողովուրդը ազնիւ և արդար կերպով կառավարվի և այն ժամանակ նա, թշնամու փոխաբեր, նրա նեցուկը կը դառնայ։

Ժողովուրդը այժմ շատ իրաւացի պատճառներ ունի դժգոհ լինելու, ուստի թէ սովորական և թէ Եւրոպայի շահերը պահանջում են, որ վատթար վարչութիւնը և կառավարութիւնը արմատախիլ լինի և ահա պէտք է գործ դնել արմատախիլ անող իրական միջոցները։ Այդ ուղղութեամբ և կը գործի անգլիական կառավարութիւնը միւս պետութիւնների գործակցութեամբ, և որովհետև այդ պետութիւններից ոչ մինը մտադիր չէ սուր կերպարանք տալ արեւելեան հարցին, իսկ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է մի իրական դարձան դանդի թիւրքիայի այժմեան վատթար վարչութեան վերջ դնելու համար, մեծ յոյս կայ, որ գործը անցկացնում կը պսակվի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՒՆՆԵՐ ԲԱՐԵՅՈՐԴԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

Երէկ, ամսիս 7-ին, ս. Նշան եկեղեցու դպրոցի դահլիճում կայացաւ Հայոհանաց բարեգործական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը։ Նիստը, որ յայտարարված էր ժամը 11-ին, բացվեց հաղիւ ժամը 1-ին։

Վարչութեան ատենապետուհին կարգաց անցեալ տարվայ ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, որը ժողովը հաստատեց անիոփոխ, և որից յետոյ կարգացվեց ընկերութեան 1894 թ.ի տեղեկագիրը և հաշիւը։

Հաշիւը երևաց, որ ընկերութիւնը 1894 թ.ի ընթացքում ունեցել է մուտք ընդամենը 21658 ռ. 65 կ. որից 15,195 ռ. 56 կ. մնացորդ 1893 թ.ից, իսկ 6,458 ռ. 65 կ. ստացվել է 1894 թ. ընթացքում, իսկ ծախք եղել է ընդամենը—7384 ռ. 70 կ. այնպէս որ առ 1-ն յունվարի 1895 թ. ընկերութիւնը ունի պատրաստ դրամ 14274 ռ. 35 կ. Հաշիւը անիոփոխ հաստատվելուց յետոյ, կարգացվեց ներկայ 1895 թ.ի նախահաշիւը։ Երեսուցորդված է 6334 ռ. մուտք նոյնպիսի ժողովը նոյնպէս անիոփոխ հաստատեց նախահաշիւը։

Այնուհետև վարչութեան առաջարկութեամբ ընկերութեան պատուաւոր անդամ ընտրվեց Կիմբերլէյ Վարլարէ Բոտինանց, և որոշվեց բանալ ս. Նշան եկեղեցու դպրոցի հինգերորդ բաժին։

Կարգալ, լուծեալ հաստատել, առանց քննելու, առանց քննադատելու, անխօս, անձայն,—առաջարկեց ընկերութեան ժողովի պատկերը։

ԾԻԱԽՈՏԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԻՆԵՐԸ

Գիւղատնտեսական ընկերութեան մարտի 28-ի նիստը նուրբված էր ծխախոտագործութեան կարիքների քննութեան։ Զեկուցանում էր Ա. Քալանթարը։

Երեսուցորդութիւնը Անդրկովկասի աշխիւ ընկնող արդիւնաբերութիւններից մէկն է։ Երկրաւոր մասը ստանում է ծխախոտից տարեկան մօտ մի միլիոն ռուբլի, կառավարութիւնը ակցիզի միջոցով համարեա դրա մէկ ու կէսը և կրկնակին և բացի դրանից՝ ծխախոտի գործարանները միջոց ունեն տեղական հում ապրանք ստանալ և նրան մշակել։

Երեսուցորդ ցանքսով 1893 թ.ին բռնված էր 153,000 զեկուցաւոր հող և, ինչպէս ցոյց են տալիս վիճակագրական թւերը, որից օր ծխախոտի մշակութիւնը մեծանում է։

Սակայն մի այդպիսի մեծ և լուրջ արդիւնաբերութիւն, ինչպիսին է ծխախոտագործութիւնը, շատ անխնամ և անհոգ վիճակին է մատնված և գտնվում է այնպիսի դժուարութիւնների և արեւելքների մէջ, որ միայն մեծ նեղութիւններով և դժոգութիւններով է առաջ դնում։

Կառավարութիւնը և ուրիշ ձեռնհաս հաստատութիւններ պէտք է օգնութեան դան այս արդիւնաբերութեան, որպէս զի նա կանոնաւոր դարգացման ընթացք ստանայ։

Օգնութեան միջոցները երկու տեսակ են.—մէկը վերաբերում է նրա ցանկուն, խնամելուն և մշակելուն, միւսը՝ նրան պահելուն և վաճառելուն։

Երեսուցորդ ամենաազնիւ տեսակներն էլ աշողվում են Անդրկովկասում—և հմուտ ձեռքերը կարող կը լինեն ոչ միայն ապրանք պատրաստել տեղական գործածութեան համար, այլ և եւրոպական Ռուսաստան և արտասահման ուղարկելու համար։

Ան ծովի ափին հաստատված թիւրքահայ գաղթականները, որ իրանց հայրենիքում արդէն ծախսեցին երեք ծխախոտագործութեան, այժմ կարող դանում են այնպիսի ծխախոտներ պատրաստել, որոնք գնահատվում են 10—12 և մինչև անդամ 15—18 ռուբլի պուղը, որինակ Յեքիդայում։

Այդպիսով ծխախոտագործութիւնը, եթէ նա հմուտ ձեռքերում է գտնվում, կարող է մեծ օգուտներ տալ։ Եւ ուրեմն կարեւոր է, որ միջոցներ ձեռք առնվեն թէ լաւ սերմեր տարածելու երկրի մէջ և թէ ստիւթեցնելու կանոնաւոր կերպով մշակել այդ բոյսը։

Բայց որչափ և լաւ լինի արդիւնաբերած ապրանքը, նա յաճախ մնում է անվաճառ. շնորհիւ այն անկարգութեան և անբարեխղճութեան, որ տիրում է միջոցներին և հետ բռնած գործում։ Կարեւոր է, որ կառավարութիւնը նպաստի հետաւորներին կից փոխառու հիմնարկութիւններ հաստատել, որպէս զի ծխախոտագործը կարողանայ սպասել լաւ գներին և ստիպված չը լինի անստոր և անձեռնտու գներով վաճառել իր ծխախոտը, փողի պակասութեան պատճառով։

Այդ գործին կարող են նպաստել և ծխախոտագործների ընկերակցութիւնները, որոնք միջոց կու-

նենան թէ առեւտրական յարաբերութիւններ սկսել մեծ վաճառականական կենտրոնների հետ և թէ նոյն իսկ բանալ գործարաններ այն շրջաններում, ուր դարգացած է ծխախոտագործութիւնը։

Գիւղատնտեսական ընկերութիւնը մտադիր է այդ խնդիրների քննութեան նուրբ մի քանի նիստեր։

ՌՈՒՍԱՅ ԴՐԱՄԱՍԻԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Ապրիլի 4-ից արքունական թատրոնում սկսվեցին Մոսկվայից եկած ռուսաց դերասանական խմբի դրամատիկական ներկայացումները, դերասան Լիւդվիգովի զեկավարութեամբ։

Առաջին օրը ներկայացրին Ժօրթ Օնէի «Հանգստագործարանաւոր» գեղեցիկ պիէսը, երկրորդ օրը՝ Սովորինի «Տաթարանա Ռեպինա» անհամ պիէսը, երրորդ օրը, ապրիլի 6-ին, Կրիլովի «Сор-вандецъ» կոմէդիան։

Այս կոմէդիան Կրիլովի ամենաաղող պիէսներից մէկն է։ Նրա մէջ կան և իրական տիպեր, և սրամտութիւն, և հետաքրքրական տեսարաններ։

Բովանդակութիւնը բարդ չէ.—Իշխանուհի Սուրամակայա, իր միակ որդու, Բօբիի և իր կղերք պաշտօնավոր գեներալի հետ գալիս են դիւղը հիւր կալուածատէր Զակրուտինի մօտ, որը երեք աղջիկ ունի։ Իշխանուհու նպատակն է իր սիրելի Բօբիի համար հարսնացու ընտրել այդ երեք աղջիկներից մէկին, հնուր Պետրեբուրգի «փայցած» օրիորդների շրջանից։ Զակրուտին օրիորդները սովորական աղջիկներ են, բացի փոքրիկ ջոյլը, Լիւբան, որը համարձակ, յանդուգն, ազատաստ, կամքի տէր, անընկճելի է.—մի խօսքով մի «Сор-вандецъ», և ամենքի աշխիւ փուշ։ Սակայն բանից դուրս է գալիս, որ այդ «աշխիւ փուշը» մի և նոյն ժամանակ ամենից բարի է, անհիշ, անկեղծ, մարդասէր, որի վրա վերջ ի վերջ օրիորդները վրում է Բօբին և ստիպում է մօրը, որ թող տայ նրա հետ ամուսնանալու։ Այդպէս էլ լինում է։

Տիպերը շատ կենդանի են.—այդ պաշտօնավոր գեներալը, որի ամբողջ զբաղմունքը Պետրեբուրգի փողոցներում մանդալն է. այդ կալուածատէր Զակրուտինը, որը առաւօտից մինչև երեկոյ դուղը պատին է տալիս, իր աղջիկներին մարդու տալու համար. այդ կոտորվող Իշխանուհին՝ իր ամուսն Բօբիի հետ. վերջապէս այդ տարօրինակ Լիւբան, —բոլորն էլ կենդանի տիպեր են, ամենքին ծախսով, ամենքին հասկանալի։

Բոլոր խաղացողներն էլ, պէտք է խոստովանել, շատ լաւ էին և դուրսնութիւն պատճառեցին հասարակութեանը։

Վատ չանցաւ և Մանսֆէլդի մի գործողութիւնից բաղկացած «Печотливое поручение» կոմէդիան, որի մէջ զլիւսաւոր հերոսի՝ Կորնէյի դերը շատ զեղեցիկ կատարեց Լիւդվիգով։

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Մարտի 27-ին

Ապրիլի 5—12 լինելու է տպագրական գործի և մամուլի ներկայացուցիչների ժողով։

Տպագրական գործի ցուցահանդէսը բաւական աշող է, վայելուչ և լաւ տպագրութիւն է թողնում։ Աշխիւ են ընկնում օտար էկզպոնէտներ, վարչական, Բիւրօ, էլ չենք ասում Լէպյիգի, Դոտուգարտի մասին։

Այսօր նախկին մինիստր Վիշնեգրադսկու թաղումն է։

Երէկ Կսենեան ինստիտուտը բացվեց։ Մադինիին երկու անգամ առիթ ունեցայ լսելու «Բիւրօլեյ» մէջ հերցոգի նորահալի դերում և «Լուկրէցիա Բօրչիայում» Զէնարօի դերում։ Զայնը թող է, մեծ տպագրութիւն չէ թողնում, բայց զմայլեցնում է երեկու ձեռք, տէխնիկան։

Ուրբաթ օրը թաղեցին բաղադրանք նախկին ռուսանդ-տէխնիկ Զարուկին Հակոբեանին, որ ինքնասպանութիւն էր գործել։ Զուգայէս նա հիւանդ էր և բժշկվում էր պրօֆէսոր Զէյտի մօտ. բայց որովհետև այդ հիւանդութիւնը ժառանգական էր, նա վերջ է դրել իր կեանքին, թողնելով մի նամակ, որի մէջ ասում է, որ իրան ծանր է տանել այն միտքը, որ վաղ թէ ուշ ինքը պիտի խելագարվի։ Բոլոր ընկերներին սիրելի էր նա իր աղնութեամբ, անկեղծութեամբ և մարդասիրութեամբ։

Տ. Նազարեան

